**Կապանի համայնքապետարանի կողմից նախատեսվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայանի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային լսման**

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**16.12.2024թ.** **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի /այսուհետ՝ Հավելված/ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք ՀՀ Սյունիքի մարզի Կապանի մշակույթի կենտրոնում/ ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան, Չարենց 1 շենք/ 2024 թվականի դեկտեմբերի 12-ին, ժամը 12:00-ին տեղի ունեցավ Կապանի համայնքապետարանի կողմից նախատեսվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակայանի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Սթեմ» ՍՊ ընկերության և Կապանի համայնքապետարանի աշխատատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությունը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 196 (7197) համարում և Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարություններ բաժնում:

Համաձայն ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2343-Ն որոշման 21-րդ կետի՝ վերը նշված հանրային քննարկման վերաբերյալ Ձեր առաջարկությունները,

դիտողությունները և կարծիքները կարող եք ներկայացնել, ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ մինչ այսօր չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Սթեմ» ՍՊ ընկերության ճարտարապետ, օբյեկտի հեղինակ՝ Հայկ Այվազյանին:

**Զեկույց (Հայկ Այվազյան)** – Բարև Ձեզ հարգելի կապանցիներ: Ես ներկայացնում եմ «Սթեմ» ընկերությունը, որի հիմնադիրն եմ և տվյալ օբյեկտի գլխավոր ճարտարապետը: Օբյեկտը նախագծվել է պայմանագրի, աշխատանքների նախագծային թույլտվության հիման վրա: Իրենից ներկայացնում է տարածք, որը զբաղեցնում է մոտ 5100 քառակուսի մետր հողակտոր: Երկու մասից է բաղկացած: Հավաքակայան, որտեղ տեղակայվում են բաց շվաքարաններ, այսինքն՝ տանիքը, պատերը բաց են: Եվ բոքսեր, որտեղ իրականացվում են վերանորոգման, պահեստավորման աշխատանքներ: Կլինի վարչական շենք՝ նախատեսված 50 հոգու համար, երկհարկանի՝ նկուղային հարկով: Նկուղային հարկը ծառայելու է որպես ապաստարան: Վարչական շենքի առաջին հարկում տեղակայված են լինելու կոմունալ հարմարություններ, այսինքն՝ հանդերձարաններ, լոգարաններ, սանհանգույցներ ըստ նորմատիվների: Յուրաքանչյուր անձի համար նախատեսված է մեկ պահարան, այսինքն՝ հիսուն պահարան: Ըստ առաջադրանքի միաժամանակ լինելու է ճաշասրահ, որտեղ կընթանա աշխատակիցների ընդմիջման ժամանցը: Երկրորդ հարկում՝ վարչական սենյակներ, պահակասենյակ և ինչ անհրաժեշտ է կոմունալ տնտեսության աշխատակիցների համար: Տեղակայված են 21 հատ շվաքարաններ՝ բաց վիճակում: Այսինքն՝ տանիքը փակ է, միայն անձրևից, ձյունից է պաշտպանվում: Պատերը բաց են ցանկացած մեքենա կարող է լինել, որը բաղկացած է նորից երկու հատվածից՝ 7 մեքենա միջնամասում է կայանատեղում, մնացած 14-ը վերևի հատվածում: Ասեմ, որ ապահովված է բոլոր ինժեներական կառույցներով, այսինքն՝ ջեռուցում, օդափոխություն, ջրամատակարարում, կոյուղի: Մենք արդեն ստացել ենք ջրի տեխպայմանները: Ուսումնասիրել ենք նախագծային լուծումները և շուտով պատրաստ կլինեն: Այսօրվա վիճակով տեղյակ պահեմ, որ գրեթե նախագծային աշխատանքները հասնում են ավարտին: Արդեն նախահաշվային փուլում ենք գտնվում, նախագծային լուծումները բոլորը համաձայնեցված է համայնքապետարանի աշխատակիցների հետ: Մենք սերտ կապերի մեջ ենք իրար հետ՝ թե՛ հեռախոսով, թե՛ սկայպով, թե՛ անձամբ:

Քննարկումներ ենք անում, և եթե լինում են առաջարկություններ, ապա հաշվի ենք առնում և նորմատիվների սահմաններում կարողանում ենք կիրառել: Շնորհակալություն:

**Հարց (Գոռ Թադևոսյան)**- Շատ լավ, կա՞ն հարցեր: Պարոն Այվազյան վարչական շենքը քանի՞ աշխատակցի համար է նախատեսված:

**Պատասխան (Հայկ Այվազյան)**- 50 հոգու համար, այսինքն՝ այսօր մենք 50 հոգի չունենք: Քաղաքապետը հեռանկարային թիվ է ասել: Այսօր մենք փաստացի ունենք մոտ 15-20 հոգի, բայց նախատեսել ենք 50 տեղի համար: Այսինքն՝ 50 տեղը պայմանավորված է հիմնականում՝ ճաշասրահով: Չմոռանամ ասեմ, որ նախատեսվում է նաև սակավաշարժ մարդկանց համար սանհանգույց և աշխատասենյակ: Դա նույնպես պարտադիր պահանջներից է: Առաջին հարկում է նախատեսված, քանի որ մենք վերելակ չունենք, սարքեր չունենք, որ հանենք վերև: Աշխատասենյակը առաջին հարկում է նախատեսվել, առանձին սանհանգույցով:

**Հարց (Գոռ Թադևոսյան)**- Շատ լավ, իսկ քանի՞ քառակուսի մետր թաքստոց է նախատեսված:

**Պատասխան (Հայկ Այվազյան)**- Ամբողջ շենքի պարագծով է գտնվում: Մոտ 300 քառակուսի մետր: Ապահովված բոլոր ինժեներական սարքավորումներով, այսինքն՝ ջրի տարաններ, որը պետք է այդ պահին գործի, սենյակ, որտեղ տեղակայված պետք է լինի հոսանքի առանձին գեներատոր: Մնացածն արդեն տարածք է, որտեղ տեղակայված են աթոռներ նստելու, սպասելու: Երկու մուտք և ելք ունի տարբեր ուղղություններով՝ պարտադիր տարբեր ուղղություններով: Մի կողմից մտնում են, մյուս կողմից դուրս գալիս, որովհետև պետք է հեռու լինեն իրարից:

**Հարց (Գոռ Թադևոսյան)** - Տարածքում կանաչապատ հատվածներ նախատեսվո՞ւմ են:

**Պատասխան (Հայկ Այվազյան)** - Կան, շատ չէ, բայց կան: Նախատեսված է, բայց քանի որ տնտեսությունը բավականին մեծ է կանաչապատում հիմնականում տեղակայված է ավտոմեքենաների լվացման հատվածում: Երկու հատ մեքենայի լվացման կայան ենք նախատեսում՝ ավտոմատ ռեժիմով, իր պարզարանով, որ ջուրը մաքրվի և գնա դեպի կոյուղի:

**Ամփոփում (Գոռ Թադևոսյան)** - Շատ լավ, կա՞ն հարցեր: Եթե հարցեր չկան հարգելի գործընկերներ շնորհակալություն են հայտնում հանրային քննարկմանը մասնակցելու համար: Հանրային քննարկումը համարենք ավարտված:

**<u>Հանրային քննարկման վարող՝</u>**

**Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ** **Գոռ Թադևոսյան**

**<u>Նախաձեռնող՝</u>**

**Կապանի համայնքապետարան, համայնքի ղեկավար** **Գևորգ Փարսյան**